Հաստատում եմ՝
Տնօրեն _____ Հ. Կոստանյան

Ստուգված է՝
ՈՒսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ՝ _____ Ռ. Անտոնյան
Օգոստոս 2023թ.

# ՖԻԶՄԱԹ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

## 2023– 2024 ուսումնական տարի

*Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան № 3 հիմնական դպրոց*

*Մասնախմբի ղեկավար՝ Ա. Մարգարյան*

## ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Որակական նոր մակարդակի վրա բարձրացնել մաթեմատիկա, ֆիզիկա, ինֆորմատիկա, քիմիա, կենսաբանություն առարկաների դասավանդումը դպրոցում:

Բարձրացնել յուրաքանչյուր դասի արդյունավետությունը՝ լայնորեն օգտագործելով համագործակցային ուսուցման, նոր մեթոդների և մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները:

Ապահովել ուսումնական ծրագրերի պահանջների կատարումը՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից մշակված առարկայական չափորոշիչների պահանջներին համապատասխան:

Ներառական կրթություն իրականացնելիս (կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների) ուսուցումն իրականացնել յուրաքանչյուր սովորողի համար պետական կրթական չափորոշիչներին համապատասխան կազմված Անհատական ուսուցման պլանի ( ԱՈՒՊ) հիման վրա:

Հատուկ ուշադրություն դարձնել ուսուցիչ – աշակերտ հարաբերությունների նոր՝ ինտերակտիվ մեթոդների կիրառմանը, աշակերտակենտրոն դասապրոցեսի կազմակերպմանը:

Շարունակել աշխատանքը ուսուցիչների մանկավարժական-մասնագիտական մակարդակի բարձրացման ուղղությամբ:

ՈՒսումնասիրել և գործնականորեն կիրառել մանկավարժական-մասնագիտական նորագույն նվաճումները՝ հատկապես ուսուցիչների փորձի փոխանակման, ստեղծագործական հաշվետվությունների և բաց դասերի միջոցով:

Մանկավարժների կարևորագույն խնդիրներից մեկը համարել ժամանակակից մեթոդներով դասապրոցեսի կազմակերպումը և դասին յուրաքանչյուր աշակերտին իր հնարավորությունների չափով մասնակից դարձնելը, ապահովելով սովորողների՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված առարկայական չափորոշիչներով նախատեսված նվազագույն մակարդակի յուրացումը:

Ուշադրություն դարձնել սովորողների խոսքի կուլտուրայի և շարադրման կարողությունների զարգացմանը:

Դպրոցի սովորողներին, նախապատրաստել դպրոցականների առարկայական օլիմպիադաների՝ նրանց ստեղծագործական մտածողության, հմտությունների ու կարողությունների զարգացման միջոցով:

ՈՒսուցչի աշխատանքը գնահատելիս հաշվի առնել կրթության որակի արդյունավետության բարձրացման ուղղությամբ նրա կողմից կատարած աշխատանքները և տվյալ դասարանի աշակերտների ընդհանուր կարողություններին համապատասխան հնարավոր արդյունքերը:

Դպրոցի 9-րդ դասարանի սովորողներին նախապատրաստել դպրոցի ավարտական քննություններին, ծանոթացնել քննությունների անցկացման նոր կարգին:

ՖԻԶՄԱԹ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2023 - 24 ուստարի

*Վանաձորի Հովի. Թումանյանի անվան № 3 հիմնական դպրոց*
*մասնախմբի ղեկավար՝ Ա. Մարգարյան*

| | Աշխատանքի բովանդակությունը | Ժամկետը | Կատ. պատասխանատուն | Նշում |
|---|---|---|---|---|
| 1 | 2022-23 ուստարվա կատարած աշխատանքների ամփոփում և նոր ուստարվա անելիքներն ու խնդիրները | Օգոստոս | Մասնախմբի ղեկավար | |
| 2 | Մեթոդմիավորման աշխատանքների պլանավորում և կազմակերպում | Օգոստոս, սեպտեմբեր | Մասնախմբի ղեկավար | |
| 3 | Մասնախմբի աշխատանքային պլանի քննարկում և հաստատում | Օգոստոս | Մասնախմբի ղեկավար | |
| 4 | Նոր չափորոշչային պահանջներին համապատասխան առարկայական թեմատիկ պլանավորումների քննարկում և հաստատում | Օգոստոս | Փոխտնօրեն և մասնախմբի ղեկավար | |
| 5 | 2023-24 ուստարվա ընթացքում տրվելիք թեմատիկ գրավոր աշխատանքների տեսակի ու քանակի քննարկում և որոշում | Օգոստոս | Մասնախմբի ղեկավար | |
| 6 | Ծանոթացում օգոստոսյան խորհրդակցության ցուցումներին | Օգոստոս | Մասնախմբի ղեկավար | |
| 7 | Ծանոթացում սովորողների ընթացիկ գնահատման նյութերի փաթեթին | Օգոստոս | Մասնախմբի ղեկավար | |
| 8 | 2023-24 ուստարվա ընթացքում կատարվելիք նախագծային աշխատանքների քննարկում, կազմակերպում և իրականացում | Օգոստոս, ուստարի | Մասնախմբի ղեկավար, ուսուցիչներ | |
| 9 | Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման գործընթացի կազմակերպում, անհատական ուսուցման պլանների ( ԱՈՒՊ) կազմում: | Սեպտեմբեր, ուստարվա ընթացքում | Մասնախմբի ղեկավար և անդամներ | |
| 10 | Մեթոդմիավորման ամենամսյա նիստերի կազմակերպում և անցկացում | ՈՒստարվա ընթացքում | Փոխտնօրեն և մասնախմբի ղեկավար | |
| 11 | ՈՒսումնական ծրագրերի, նոր դասագրքերի ու մեթոդական ձեռնարկների ուսումնասիրում և քննարկում | ՈՒստարվա ընթացքում | Փոխտնօրեն, մասնախմբի ղեկավար և անդամներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 12 | ՈՒսումնական կաբինետների կահավորում և հարստացում | ՈՒստարվա ընթացքում | Մասնախմբի ղեկավար և անդամներ | |
| 13 | Մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրում, ընդհանրացում և ներդրում պրակտիկ աշխատանքում | ՈՒստարվա ընթացքում | Փոխտնօրեն, մասնախմբի ղեկավար և անդամներ | |
| 14 | ՈՒսուցիչներին հաղորդակից դարձնել մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպել սեմինարներ, ընթերցումներ | ՈՒստարվա ընթացքում | Փոխտնօրեն և մասնախմբի ղեկավար | |
| 15 | Կազմակերպել մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդատվություններ, զեկույցներ | ՈՒստարվա ընթացքում | Փոխտնօրեն և մասնախմբի ղեկավար, անդամներ | |
| 16 | Էլեկտրոնային մատյանների պատշաճ վարման, պլանների կատարողականի կատարման հետ կապված հարցերի քննարկում | ՈՒստարվա ընթացքում | Մասնախմբի անդամներ | |
| 17 | Դասավանդման մեթոդների կատարելագործման, համագործակցային ուսուցման և նոր տեխնոլոգիաների կիրառման նպատակով՝ կազմակերպել տարաբնույթ դասեր | ՈՒստարվա ընթացքում | Փոխտնօրեն, մասնախմբի ղեկավար և անդամներ | |
| 18 | Համացանցի www.armedu.am, www.aniedu.am կայքէջերի, մասնագիտական ամսագրերի և թերթերի նյութերի ուսումնասիրում և քննարկում | ՈՒստարվա ընթացքում | Փոխտնօրեն և մասնախմբի ղեկավար | |
| 19 | Միջին դպրոցի 5- 9-րդ դասարաններում սովորողների գիտելիքների մակարդակը ուսումնասիրելու նպատակով տնօրինության կողմից գրավոր աշխատանքների անցկացում | 25.11-6.12.21թ-4.04-14.04.2022թ. | Փոխտնօրեն և մասնախմբի ղեկավար | |
| 20 | Դպրոցական օլիմպիադաների, մրցույթների կազմակերպում | I, II կիսամյակի ընթացքում | Մասնախմբի ղեկավար և անդամներ | |
| 21 | Փոխադարձ դասալսումների կազմակերպում և քննարկում | ՈՒստարվա ընթացքում | Փոխտնօրեն, մասնախմբի ղեկավար և անդամներ | |
| 22 | Առարկայական մեկամսյակի կազմակերպում և անցկացում | Մարտ | Մասնախմբի ղեկավար և անդամներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 23 | «Կենգուրու» միջազգային մրցույթի կազմակերպումը և անցկացումը | Մարտ | Մասնախմբի ղեկավար | |
| 24 | Ավարտական քննությունների նախապատրաստում, նոր կարգի հետ ծանոթացում | Մայիս | Մասնախմբի ղեկավար և անդամներ | |
| 25 | 120 և ավելի ժամ բացակայած աշակերտների ցուցակի կազմում և ամփոփիչ գրավոր աշխատանքների նախապատրաստում | Դեկտեմբեր, մայիս | Մասնախմբի ղեկավար և անդամներ | |
| 26 | Ամառային առաջադրանքների կազմում բոլոր դասարանների համար | Մայիս | Մասնախմբի ղեկավար և անդամներ | |
| 27 | Թեմատիկ պլանների կատարողականնեի ստուգում յուրաքանչյուր երկամսյակ | Յուրա-քանչյուր երկամսյակ | Մասնախմբի ղեկավար, փոխտնօրեն | |
| 28 | Արդյունքների ամփոփում | Դեկտեմբեր, հունիս | Մասնախմբի ղեկավար | |

## Զեկուցումներ

| | | |
|---|---|---|
| Հովսեփյան Լ. | | |
| Սաֆարյան Ա. | | |
| Մարգարյան Ա. | | Հոկտեմբեր, 2018թ.<br>Մայիս 2019թ. |
| Նազլուխանյան Ս.. | | Նոյեմբեր, Մարտ |
| Սաքունց Մ. | | Դեկտեմբեր<br>Ապրիլ |

## Տեղեկություններ Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան № 3 հիմնական դպրոցի ֆիզմաթ մեթոդական միավորման կազմի մասին

| № | Ազգանունը, անունը | Մանկության տարեթիվ | Կրթությունը | Դասավանդած առարկան | Աշխատանքային ստաժը | Դասաժամերի քանակը | Դասարանները | Տարակարգ | Կառավարման խորհրդի անդամ | Սանկ. խորհրդի անդամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Մարգարյան Ա. | 1975 | բարձր. | Մաթեմ. | 20 | 26/25 | $5^{Բ}$,$6^{Ա}$,$7^{Բ}$, $8^{Բ}$,$9^{Ա}$ | այո | ոչ | այո |
| 2. | Սաֆարյան Ա. | 1973 | բարձր. | Մաթեմ. | 22 | 26/25 | $5^{Ա}$,$6^{Բ}$,$7^{Ա}$, $8^{Ա}$,$9^{Բ}$ | այո | այո | այո |
| 3. | Սաքունց Մ. | 1968 | բարձր. | Ֆիզիկա, ինֆորմ. | 30 | 12/12 8 | $6^{Ա}$,$6^{Բ}$,$7^{Ա}$, $7^{Բ}$,$8^{Ա}$,$8^{Բ}$, $9^{Ա}$,$9^{Բ}$ | այո | ոչ | այո |
| 4. | Անտոնյան Ռ. | 1978 | բարձր. | Կենսաբ., քիմիա | 10 | 13/12 10 | $6^{Ա}$,$6^{Բ}$,$7^{Ա}$, $7^{Բ}$,$8^{Ա}$,$8^{Բ}$, $9^{Ա}$,$9^{Բ}$ | ոչ | ոչ | այո |

**2019-2020 ուստարի**